«ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ
Խորհրդի կողմից
(15.06.2012. Խորհրդի նիստի թիվ 05
արձանագրություն)

Խորհրդի նախագահ՝ _____ Դ. Է. Խաչատուրով

ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ
2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ
3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԸ
4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ
5. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ
6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱԿԱԳՆԻ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ
7. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԿՆՔԵԼՈՒ, ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ, ԴՐԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ
8. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
9. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ՆՇԱՆՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ
10. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ
11. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ
12. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)
13. ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ
14. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն Պայմանները մշակված են համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, «Ապահովագրության և Ապահովագրական գործունեության» մասին ՀՀ օրենքի և համապատասխանում են ՀՀ ԿԲ կողմից տրված թիվ 0009 Լիցենզիայի Դժբախտ պատահարներից ապահովագրության դասին:
Սույն Պայմանները հանդիսանում են սույն Պայմանների համաձայն կնքված ապահովագրության Պայմանագրերի/Վկայագրերի անբաժանելի մասը: Պայմանագրի/Վկայագրի և Պայմանների միջև անհամապատասխանության դեպքում գերակայությունը տրվում է Պայմանագրին/Վկայագրին:

1. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐ

1.1 ՀՀ օրենսդրության համաձայն և սույն Պայմանների հիման վրա «ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ» ապահովագրական ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ապահովագրող) գործունակ ֆիզիկական անձանց և իրավաբանական անձանց (այսուհետ՝ Ապահովադիր) հետ կնքում է Դժբախտ պատահարների ապահովագրության պայմանագրեր/վկայագրեր (այսուհետ՝ Պայմանագիր/Վկայագիր):

1.2 Ապահովագրության սուբյեկտներն են՝ Ապահովագրողը, Ապահովադիրը, Ապահովագրված անձը:

1.3 Ապահովադիրը կնքում է Ապահովագրողի հետ Պայմանագիր/Վկայագիր իր օգտին կամ երրորդ անձանց օգտին (այսուհետ՝ Ապահովագրված անձինք): Ապահովադիրներ կարող են հանդիսանալ՝

- ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք, որոնք գրանցված են և գործում են ՀՀ օրենսդրության համաձայն,
- գործունակ ֆիզիկական անձինք՝ ՀՀ քաղաքացիներ, օտարերկրյա քաղաքացիներ:

1.4 Սույն Պայմանների համաձայն՝ Պայմանագրերը/Վկայագրերը կնքվում են Ապահովագրված անձանց օգտին՝ ՀՀ քաղաքացիների, ՀՀ տարածքում գտնվող օտարերկրյա քաղաքացիների:

ՀՈԴՎԱԾ 2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ

2.1 Համաձայն սույն Պայմանների Պայմանագրով/Վկայագրով ապահովագրության օբյեկտ են հանդիսանում Ապահովադրի կամ Ապահովագրված անձի գույքային շահերը՝ կապված դժբախտ պատահարի հետևանքով Ապահովագրված անձի կյանքին և առողջությանը վնաս հասցնելու հետ:
2.2 Ապահովագրման ենթակա չեն հետևյալ անձինք ՝

- 1-ին, 2-րդ, 3-րդ խմբի հաշմանդամները, «Հաշմանդամ երեխա» կարգավիճակ ունեցող անձինք,
- կայուն նյարդային կամ հոգեբանական խախտումներով և/կամ հիվանդություններով տառապող անձինք,
- անձինք, ովքեր հաշվառված են նյարդահոգեբանական և/կամ նարկոլոգիական և/կամ հակատուբերկուլյոզային դիսպանսերներում,
- ստացիոնար, ամբուլատոր բուժման կամ հետազոտության մեջ գտնվող անձինք (մինչև նրանց լրիվ բուժվելը),
- օնկոլոգիական հիվանդություններով, ՁԻԱՀ-ով կամ այլ իմունոդեֆիցիտային հիվանդություններով անձինք,
- հետախուզման մեջ գտնվող, հետաքննության տակ գտնվող կամ ազատազրկման դատապարտված անձինք,
- առողջական վիճակից ելնելով՝ մշտական խնամքի կարիք ունեցող անձինք:

Եթե Պայմանագրով ապահովագրվել է վերը նշված կատեգորիաներից ցանկացածին պատկանող անձ, ապա Պայմանագիրը/Վկայագիրը համարվում է լուծված, իսկ ապահովագրությունը գործողության մեջ չմտած կնքման օրվանից, ընդ որում ապահովագրավճարի վերադարձ չի կատարվում:

2.3 Պայմանագրի/Վկայագրի կնքման պահին Ապահովադրի տարիքը չի կարող փոքր լինել 18 (տասնութ) տարեկանից:
2.4. Պայմանագրի/Վկայագրի կնքման պահին Ապահովադրի/Ապահովագրված անձի տարիքը չպետք է գերազանցի 65 (վաթսունհինգ) տարեկանը, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով/Վկայագրով:

ՀՈԴՎԱԾ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ

Սույն Պայմաններով ապահովագրական պատահարներ են համարվում հետևյալ իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել Պայմանագրի գործողության ընթացքում՝

3.1 Մարմնական վնասվածք, որն առաջացել է դժբախտ պատահարի կամ սխալ բժշկական մանիպուլյացիաների հետևանքով, հանկարծակի սուր թունավորում քիմիական նյութերով և կենսաբանական ծագման թույներով (այդ թվում նաև բոտուլիզմ հիվանդությանը բերող թույնով), ինչպես նաև գեմատոգենային օստեոմիելիտով հիվանդանալը:

3.2 I, II, III խմբի հաշմանդամություն, որն առաջին անգամ սահմանված է Ապահովագրված անձին Պայմանների 3.1 ենթակետում նշված իրադարձությունների հետևանքով Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում: Եթե հաշմանդամության սահմանումը տեղի է ունեցել Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետի ավարտից հետո, այն համարվում է ապահովագրական պատահար, եթե Պայմանների 3.1 ենթակետում նշված իրադարձության առաջացման պահից անցել է ոչ ավելի քան ապահովագրության ժամկետին հավասար ժամկետ, սակայն այն չի կարող պակաս լինել 3 ամսից և ավել 12 ամսից:

3.3 Ապահովագրված անձի մահը, սույն Պայմանների 3.1 ենթակետում նշված իրադարձությունների հետևանքով, որն առաջացել է Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում, ինչպես նաև մահը, որն առաջացել է Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում շնչահեղձումից՝ շնչուղիներ օտար մարմին ընկնելու, ջրահեղձման, անաֆիլակտիկ շոկի, մարմնի գերսառեցման հետևանքով: Եթե մահը տեղի է ունեցել Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետի ավարտից հետո, այն համարվում է ապահովագրական պատահար, եթե Պայմանների 3.1 ենթակետում նշված իրադարձության առաջացման պահից անցել է ոչ ավելի քան ապահովագրության ժամկետին հավասար ժամկետ, սակայն այն չի կարող պակաս լինել 3 ամսից և ավել 12 ամսից:

3.4 Մշտական ընդհանուր անաշխատունակություն՝ սույն Պայմանների 3.1 ենթակետում նշված իրադարձությունների հետևանքով, որն առաջացել է Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում: Եթե մշտական ընդհանուր անաշխատունակությունը առաջացել է Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետի ավարտից հետո, այն համարվում է ապահովագրական պատահար, եթե Պայմանների 3.1 ենթակետում նշված իրադարձության առաջացման պահից անցել է ոչ ավելի քան ապահովագրության ժամկետին հավասար ժամկետ, սակայն այն չի կարող պակաս լինել 3 ամսից և ավել 12 ամսից:

3.5 Աշխատունակության ժամանակավոր կորուստ սույն Պայմանների 3.1 ենթակետում նշված իրադարձությունների հետևանքով, որն առաջացել է Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում,

3.6 Ապահովադիրն իրավունք ունի ընտրել ապահովագրական ռիսկը կամ ապահովագրական ռիսկերի համակցությունը սույն Պայմանների Հոդված 3-ի, 3.1-3.5 կետերից: Կողմերի համաձայնությամբ Պայմանագրով/Վկայագրով կարող են սահմանվել այլ ապահովագրական պատահարներ:

3.7 Կողմերի համաձայնությամբ Ապահովագրողի պատասխանատվությունը կարող է սահմանափակվել ապահովագրության տարածքով, ապահովագրական պաշտպանության գործողության ժամանակահատվածով և Պայմանագրում/Վկայագրում նախատեսված օրենսդրությանը չհակասող այլ պայմաններով:

ՀՈԴՎԱԾ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Յուրաքանչյուր Ապահովագրված անձի համար ապահովագրական գումարը սահմանվում է Ապահովագրողի կողմից Ապահովադրի հետ համաձայնությամբ և նշվում է Պայմանագրում/Վկայագրում:

4.2 Ապահովագրական գումարը կարող է սահմանված լինել կոնկրետ Ապահովագրված անձի համար ընտրված բոլոր ապահովագրական ռիսկերի համար ընդհանուր գումարի ձևով, կամ նման ռիսկերից յուրաքանչյուրի համար առանձին սահմանված գումարների ձևով, ինչը պետք է նշված լինի Պայմանագրում/Վկայագրում:

4.3 Մի քանի անձանց օգտին կնքված Պայմանագրով/Վկայագրով, յուրաքանչյուր Ապահովագրված անձի համար ապահովագրական գումարի չափը (անհրաժեշտության դեպքում՝ յուրաքանչյուր ռիսկի համար առանձին) կարող է նշվել Ապահովագրված անձանց ցուցակում: Ապահովագրված անձանց ցուցակին կից կարող է ներկայացվել ապահովագրության դիմում-հարցաթերթիկը, որը, առկայության դեպքում,

հանդիսանում է Պայմանագրի/Վկայագրի բաղկացուցիչ և անբաժանելի մասը: Ապահովագրված անձանց ցուցակի և ապահովագրության մասին դիմումի ձևը տիպային է: Ապահովագրողն իրեն իրավունք է վերապահում դրանցում փոփոխություններ և լրացումներ կատարել՝ տվյալ Պայմանագրի/Վկայագրի պայմանների և գործող օրենսդրության համաձայն:

ՀՈԴՎԱԾ 5. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

5.1 Պայմանագիրը/Վկայագիրը կնքվում է մեկ օրացուցային տարի ժամկետով, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ: Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետի սկիզբը և ավարտը նշվում են Պայմանագրում/Վկայագրում:
5.2. Պայմանագիրն/Վկայագիրն ուժի մեջ է մտնում պայմանագրի/վկայագրի կնքման պահից, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով/Վկայագրով:

ՀՈԴՎԱԾ 6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱԿԱԳՆԻ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1. Կախված Ապահովադրի կողմից ընտրված ռիսկերից՝ ապահովագրական սակագնի չափը սահմանվում է ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսադրույքով՝ տարեկան բազային տոկոսադրույքի հիման վրա:
6.2. Ապահովագրողն իրավունք ունի բազային տոկոսադրույքների նկատմամբ կիրառել կարգավորիչ գործակիցներ (ավելացնող և/կամ նվազեցնող գործակիցներ)՝ կախված Ապահովագրողի պատասխանատվության ծավալից, Ապահովագրված անձի տարիքից, սեռից, գործունեության տեսակից, հիմնական գործունեությունից, առողջական վիճակից, բնակպայմաններից, Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետից, ապահովագրական և Պայմանագրում/Վկայագրում նշված այլ պայմաններից:
6.3. Ապահովագրավճարը (հերթական ապահովագրական վճարը) վճարվում է Ապահովադրի կողմից՝ ՀՀ դրամով, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:
6.4. Պայմանագրով/Վկայագրով ապահովագրավճարը կարող է վճարվել Ապահովադրի կողմից միանվագ՝ ապահովագրության ամբողջ ժամկետի դիմաց կամ տարաժամկետ՝ կանխիկ կամ փոխանցումով:
6.5. Ապահովագրավճարի վճարման կարգը և ժամկետները սահմանվում են Պայմանագրով/Վկայագրով:
6.6. Ապահովադրի կողմից Պայմանագրով/Վկայագրով սահմանված ժամկետում և չափով ապահովագրավճարը (ապահովագրավճարի հերթական մասը) չվճարելու դեպքում Ապահովագրողը չի սահմանում լրացուցիչ ժամկետ ապահովագրավճարի վճարման համար, չի ծանուցում այդ մասին Ապահովադրին և ազատվում է Պայմանագրով/Վկայագրով սահմանված ապահովագրավճարի հերթական մասի վճարման ամսաթիվ հանդիսացող օրվան հաջորդող օրվա ժամը 00:00-ից հետո տեղի ունեցած իրադարձությունների հետևանքով առաջացած վնասների դիմաց ապահովագրական հատուցումներ իրականացնելու պարտականություններից:

ՀՈԴՎԱԾ 7. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԿՆՔԵԼՈՒ, ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ, ԴՐԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

7.1 Պայմանագիրը/Վկայագիրը հանդիսանում է Ապահովադրի և Ապահովագրողի միջև համաձայնություն, որի ուժով Ապահովագրողը պարտավորվում է Պայմանագրում/Վկայագրում սահմանված ապահովագրական պատահարի առաջացման դեպքում կատարել ապահովագրական հատուցում Ապահովադրին, Ապահովագրված անձին, Շահառուին կամ այլ երրորդ անձանց, իսկ Ապահովադիրը պարտավորվում է վճարել ապահովագրավճարը սահմանված ժամկետներում և կարգով:
7.2 Պայմանագրի/Վկայագրի կնքման հիմք է հանդիսանում Ապահովադրի՝ սահմանված ձևով գրավոր դիմում-հարցաթերթիկը կամ բանավոր դիմումը:
7.3 Պայմանագիրը/Վկայագիրը կնքվում է գրավոր ձևով՝ Ապահովագրողի կողմից սահմանված ձևով ապահովագրական Պայմանագրի/Վկայագրի տրամադրմամբ:
7.4 Ապահովագրական Պայմանագրի/Վկայագրի ձևը տիպային է, սակայն Ապահովագրողը վերապահում է դրանում փոփոխություններ և լրացումներ կատարելու, այլ ձևի պայմանագիր տալու իրավունքը՝ համաձայն կոնկրետ Պայմանագրի/Վկայագրի պայմանների և ՀՀ գործող օրենսդրության:

7.5 Ապահովադրի կողմից Պայմանագիրը/Վկայագիրը կորցնելու դեպքում, համաձայն նրա գրավոր դիմումի, նրան կարող է տրամադրվել Պայմանագրի/Վկայագրի կրկնօրինակը՝ համապատասխան գրառմամբ: Կրկնօրինակի տրամադրումից հետո կորած Պայմանագիրը/Վկայագիրը համարվում է ուժը կորցրած և դրանով ոչ մի պահանջ չի ընդունվում:
7.6 Պայմանագրի/Վկայագրի գործողությունը դադարեցվում է հետևյալ դեպքերում `
7.6.1 Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետի լրանալու,
7.6.2 Ապահովագրողի կողմից Պայմանագրով/Վկայագրով իր բոլոր պարտավորություններն ամբողջ ծավալով կատարելու,
7.6.3 Ապահովադրի կողմից Պայմանագրով/Վկայագրով սահմանված ժամկետներում ապահովագրավճարի չվճարման (դրա հերթական վճարումը չկատարելու) դեպքում: Այս դեպքում Պայմանագիրը/Վկայագիրը համարվում է դադարեցված Ապահովագրողի կողմից ուղարկված Պայմանագրի/Վկայագրի դադարեցման գրավոր ծանուցման մեջ ներառված ամսաթվից, սակայն ոչ շուտ, քան նշված ծանուցման ուղարկման օրվանից 15 (տասնհինգ) օր հետո:
7.6.4 Ապահովադրի և Ապահովագրողի փոխհամաձայնությամբ,
7.6.5 Ապահովագրողի՝ որպես իրավաբանական անձի, լուծարման դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,
7.6.6 Ապահովադրի կողմից Պայմանագրից/Վկայագրից վաղաժամկետ հրաժարվելու,
7.6.7 Ապահովագրողի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Պայմանագրից/Վկայագրից վաղաժամկետ հրաժարվելու,
7.6.8 Ապահովագրված անձի մահվան՝ սույն Պայմաններով նախատեսված դեպքերում,
7.6.9 ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում,
7.6.10 Եթե Պայմանագրի/Վկայագրի ուժի մեջ մտնելուց հետո վերացել է ապահովագրական պատահարի տեղի ունենալու հնարավորությունը և ապահովագրական ռիսկի գոյությունը դադարել է ապահովագրական պատահարից տարբեր այլ հանգամանքների բերումով,
7.6.11 Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ, եթե մյուս կողմը թույլ է տվել Պայմանագրի/Վկայագրի էական խախտում՝ խախտումը հայտնաբերելու պահից եռամսյա ժամկետում,
7.7 Ապահովագրողի և Ապահովադրի համաձայնությամբ Պայմանագրում/Վկայագրում կարող են կատարվել ՀՀ օրենսդրությանը չհակասող փոփոխություններ և լրացումներ՝ գրավոր ձևով:
7.8 Եթե Պայմանագրի/Վկայագրի գործողությունը դադարել է գործել Ապահովադրի նախաձեռնությամբ կամ Պայմաններով սահմանված այլ ձևով, այդ դեպքում Ապահովագրողը վերադարձնում է Ապահովադրին Պայմանագրի/Վկայագրի չլրացած օրերի համար վճարված ապահովագրավճարը, որը նվազեցվում է ընդհանուր ապահովագրավճարի 20%-ի չափով և հատուցումների գումարներով՝ համաձայն սույն կետում նշված բանաձևի: Վերոհիշյալ պայմանները կիրառվում են նաև Պայմանագրի/Վկայագրի մասնակի դադարեցման դեպքում, հիմք ընդունելով Ապահովագրված անձի ցուցանիշները, որի ապահովագրությունը դադարեցվում է:

$$RP = \frac{P}{IP} * IRP - P * 20\% - PC$$

RP՝ վերադարձվող գումար, P՝ ընդհանուր ապահովագրավճար, IP՝ Պայմանագրով/Վկայագրով նախատեսված ապահովագրության գործողության ժամկետ, IRP՝ Պայմանագրի/Վկայագրի գործողության չլրացած ժամկետ, PC՝ հատուցումների գումարներ:
7.9 Ապահովագրողի կողմից վերադարձվող ապահովագրավճարի գումարը կարող է չնվազեցվել ընդհանուր ապահովագրավճարի 20%-ի չափով և հատուցումների գումարով, եթե Ապահովադրի նախաձեռնությամբ Պայմանագրի/Վկայագրի դադարեցումը պայմանավորված է.
- Ապահովագրված անձի մեկ այլ Ապահովագրված անձով և միևնույն ապահովագրության տեսակով փոխարինման անհրաժեշտությամբ, կամ,
- Պայմանագրի/Վկայագրի որևիցե Ապահովագրված անձի մասով Պայմանագրի/Վկայագրի դադարեցման պահանջով, սակայն դադարեցման պահին Ապահովադիրը ունի Ապահովագրողի հետ գործող նմանատիպ (դադարեցման ենթակա պայմանագրի հետ միևնույն ապահովագրատեսակով) 15 և ավելի գործող ապահովագրության Պայմանագրեր/Վկայագրեր և/կամ Ապահովագրված անձ:
7.10 Ապահովադրի և Ապահովագրողի փոխադարձ համաձայնությամբ կարող են սահմանվել դադարեցման գծով վերադարձվող ապահովագրավճարի հաշվարկի այլ սկզբունքներ:

ՀՈԴՎԱԾ 8. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8.1 Ապահովադիրն իրավունք ունի՝
8.1.1 ստանալ տեղեկատվություն Ապահովագրողի մասին՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ծավալով, պայմաններով և կարգով,
8.1.2 Ապահովագրողից ստանալ խորհրդատվություն սույն Պայմանների և Պայմանագրի/Վկայագրի գործողության պայմանների մասին,
8.1.3 ստանալ սույն Պայմանները, որոնցով կնքված է Պայմանագիրը/Վկայագիրը.
8.1.4 պահանջել Ապահովագրողից վճարել Շահառուին ապահովագրական հատուցում պատահարն ապահովագրական ճանաչվելու դեպքում՝ Պայմանագրի/Վկայագրի կնքման պայմաններով սահմանված ծավալով և կարգով,
8.1.5 սույն Պայմաններով վաղաժամկետ լուծել Պայմանագիրը/Վկայագիրը՝ այդ մասին ոչ պակաս, քան 15 օր առաջ գրավոր ծանուցելով Ապահովագրողին,
8.1.6 ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ փոխարինել Պայմանագրում/Վկայագրում նշված Շահառուին մեկ այլ անձով՝ գրավոր տեղեկացնելով այդ մասին Ապահովագրողին, սակայն Շահառուն չի կարող փոխարինվել այլ անձով, եթե Ապահովագրողը արդեն կատարել է Պայմանագրով/Վկայագրով նախատեսված պարտականություններից որևէ մեկը կամ Ապահովագրողին ներկայացրել է ապահովագրական հատուցում ստանալու մասին պահանջ կամ հայտ,
8.1.7 Պայմանագրի/Վկայագրի կորստի դեպքում ստանալ դրա կրկնօրինակը,
8.1.8 Ապահովագրողի հետ իր հարաբերություններն իրականացնել ապահովագրական միջնորդների միջոցով:
8.2 Ապահովադիրը պարտավոր է՝
8.2.1 Ապահովագրողին հայտնել ստույգ տեղեկատվություն Ապահովագրված անձի մասին, ներառյալ բժշկական բնույթի տեղեկությունները և տրամադրել բժշկական փաստաթղթեր, եթե դրանք անհրաժեշտ են ապահովագրական ռիսկը գնահատելու համար,
8.2.2 Պայմանագրում/Վկայագրում սահմանված կարգով և ժամկետներում, լրիվ ծավալով վճարել ապահովագրավճարը Ապահովագրողին,
8.2.3 Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում անհապաղ տեղեկացնել Ապահովագրողին Պայմանագրի/Վկայագրի կնքման պահին հայտնած հանգամանքների բոլոր փոփոխությունների մասին, որոնք ազդել են ապահովագրական ռիսկի աստիճանի գնահատման վրա, եթե այդ փոփոխությունները կարող են ազդել Ապահովագրողի ապահովագրական ռիսկի ավելացման վրա.
8.2.4 Ապահովագրված անձին (Շահառուին) տրամադրել ապահովագրության սույն Պայմանների դրույթների մասին տեղեկություններ, Պայմանագրի/Վկայագրի պայմանները, ինչպես նաև Ապահովագրված անձին (Շահառուին) հայտնել նրա պարտավորությունները:
8.2.5 Ապահովագրված անձը (Շահառուն) պարտավոր է՝
ա) սույն Պայմանների Հոդված 3-ի 3.1-ից 3.5 կետերով նախատեսված ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձություն տեղի ունենալու դեպքում անհապաղ, սակայն ոչ ուշ քան 24 (քսանչորս) ժամվա ընթացքում այդ մասին հայտնել Ապահովագրողին կամ նրա ներկայացուցչին Պայմանագրում/Վկայագրում նշված հեռախոսահամարով: Եթե Ապահովագրված անձը եղել է անգիտակից վիճակում կամ այնպիսի իրավիճակում, որն անհնարին է դարձնում Ապահովագրողին պատահարի մասին տեղեկացնելը, ապա նա պարտավոր է դա անել անհնարին դարձնող հանգամանքների վերացումից անմիջապես հետո: Ապահովագրված անձը կրում է ապահովագրական հատուցում ստանալու համար սահմանված ժամկետում դիմելու անհնարինության ապացուցման պարտականությունը,
բ) տեղի ունեցած պատահարի մասին անմիջապես հայտնել համապատասխան իրավասու մարմիններին (Բժշկական հաստատություն, Ոստիկանություն և այլն),
գ) տեղի ունեցած պատահարի մասին Ապահովագրողին տեղեկացնելուց հետո ոչ ուշ քան 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում ներկայանալ ապահովագրական ընկերության գրասենյակ և լրացնել Ապահովագրողի կողմից հաստատված ձևով գրավոր հայտային դիմում՝ ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստի մասին նրան հայտնի իրադարձության բոլոր մանրամասնությունների

շարադրությամբ: Գրավոր դիմումի ձևն Ապահովադիրը կարող է ստանալ Ապահովագրողի գրասենյակից, որի հասցեն նշված է Պայմանագրում/Վկայագրում: Եթե Ապահովագրված անձը դժբախտ պատահարի արդյունքում հայտնվել է անգիտակից վիճակում կամ այնպիսի իրավիճակում, որն անհնարին է դարձնում Ապահովագրողի գրասենյակ ներկայանալը, ապա նա պարտավոր է դա անել անհնարին դարձնող հանգամանքների վերացումից անմիջապես հետո: Ապահովագրված անձը կամ Շահառուն կրում են ապահովագրական հատուցում ստանալու համար սահմանված ժամկետում Ապահովագրողի գրասենյակ ներկայանալու անհնարինության ապացուցման պարտականությունը:

դ) ներկայացնել սույն Պայմանների 9-րդ Հոդվածով նախատեսված անհրաժեշտ փաստաթղթերը,

ե) կատարել Պայմաններով և Պայմանագրով/Վկայագրով սահմանված պարտավորությունները:

8.3. Ապահովագրողն իրավունք ունի՝

8.3.1 նախքան Պայմանագրի/Վկայագրի կնքումը Ապահովադրից կամ ապահովագրությանն ընդունվող անձից պահանջել տեղեկություններ, այդ թվում նաև բժշկական բնույթի և պահանջել անցկացնել ապահովագրությանն ընդունվող անձի բժշկական հետազոտում՝ նրա առողջական վիճակը գնահատելու համար,

8.3.2 անհրաժեշտության դեպքում պահանջել լրացուցիչ տեղեկություններ Ապահովադրից (Ապահովագրված անձից, Շահառուից) կամ համապատասխան իրավասու մարմիններից,

8.3.3. ստուգել Ապահովադրի, Ապահովագրված անձի, Շահառուի կողմից հայտնած տեղեկատվությունն, ինչպես նաև Ապահովադրի կողմից Պայմանագրից/Վկայագրից ծագող իր պարտականությունների կատարումը,

8.3.4 կիրառել իր կողմից մշակված ապահովագրական սակագները և նրանց կարգավորիչ գործակիցները ապահովագրավճարի չափը սահմանելու համար՝ հաշվի առնելով ապահովագրության օբյեկտը, ապահովագրության պայմանները և ապահովագրական ռիսկի աստիճանը,

8.3.5 հետաձգել ապահովագրական հատուցման տրամադրումը՝ Ապահովագրված անձի կյանքին և առողջությանը վնաս պատճառելու փաստով քրեական գործ հարուցվելու դեպքում՝ մինչև իրավասու մարմինների կողմից համապատասխան որոշման ընդունումը, ինչպես նաև դժբախտ պատահարի պատճառի մեջ կասկածի դեպքում՝ մինչև տվյալ փաստի հաստատումը,

8.3.6 ապահովագրական ռիսկի ավելացմանը բերող հանգամանքների ի հայտ գալու դեպքում Ապահովադրից պահանջել Պայմանագրի/Վկայագրի պայմանների փոփոխություն կամ լրացուցիչ ապահովագրավճարի վճարում: Եթե Ապահովադիրն առարկում է Պայմանագրի/Վկայագրի պայմանների փոփոխությանը կամ ապահովագրավճարի ավելացմանը, Ապահովագրողն իրավունք ունի պահանջել Պայմանագրի/Վկայագրի լուծում՝ համաձայն սույն Պայմանների և ՀՀ գործող օրենսդրության.

8.3.7 ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության փաստով կատարել դրա հանգամանքների ստուգում, անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո ստուգել դրանց հավաստիությունը,

8.3.8 Ապահովադրի հետ իր հարաբերություններն իրականացնել ապահովագրական միջնորդների միջոցով,

8.3.9 սույն Պայմանների 7.6.11 կետի տեղի ունենալու դեպքում Ապահովադրին չվերադարձնել վճարված ապահովագրավճարները,

8.3.10 եթե Պայմանագրում/Վկայագրում նշված ժամկետում, սահմանված չափով Ապահովադիրը չի վճարում ապահովագրավճարը, Ապահովագրողը իրավունք ունի միակողմանի դադարեցնել Պայմանագիրը/Վկայագիրը կամ յուրաքանչյուր կետանցված օրվա համար կիրառել տույժ՝ Պայմանագրում/Վկայագրում սահմանված ապահովագրավճարի 0,1 %-ի չափով:

8.4. Ապահովագրողը պարտավոր է՝

8.4.1 Ապահովադրին ծանոթացնել սույն Պայմաններին և Պայմանագիրը/Վկայագիրը կնքելիս՝ դրանք հանձնել Ապահովադրին,

8.4.2 Ապահովադրին տրամադրել սահմանված ձևի անդորրագիր, եթե ապահովագրավճարը վճարվել է կանխիկով,

8.4.3 ապահովագրական պատահարի առաջացման դեպքում և համապատասխան բոլոր փաստաթղթերը ստանալուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում ընդունել որոշում ապահովագրական հատուցման կամ մերժման մասին, այդ մասին տեղեկացնելով Ապահովադրին, Ապահովագրված անձին կամ Շահառուին,

8.4.4 մերժել ապահովագրական հատուցման տրամադրումը, գրավոր տեղեկացնելով Ապահովադրին,

Ապահովագրված անձին կամ Շահառուին 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ նշելով մերժման հիմնավորված պատճառները,
8.4.5 ապահովել Ապահովադրից (Շահառուից, Ապահովագրված անձանցից) ստացված անձնական տվյալների գաղտնիությունը և անվտանգությունը նրանց մշակման ժամանակ:
8.5 Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում իրավաբանական անձ հանդիսացող Ապահովադրի վերակազմակերպման դեպքում նրա իրավունքներն ու պարտականությունները Ապահովագրողի համաձայնությամբ անցնում են Ապահովադրի իրավահաջորդին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանվող կարգով:
8.6 Մեկ այլ անձի նկատմամբ Պայմանագիր/Վկայագիր կնքած ֆիզիկական անձ հանդիսացող Ապահովադրի մահվան դեպքում Պայմանագրով/Վկայագրով սահմանված իր իրավունքներն ու պարտականություններն անցնում են այդ անձին՝ նրա համաձայնությամբ: Այդ անձի կողմից Պայմանագրով/Վկայագրով պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում նրա իրավունքներն ու պարտականությունները կարող են անցնել այն անձանց, ովքեր, համաձայն ՀՀ գործող օրենսդրության, իրականացնում են Ապահովագրված անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության պարտականությունները:
8.7 Եթե Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում Ապահովադիրը դատարանով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ, Ապահովադրի իրավունքները և պարտականություններն անցնում են նրա խնամակալին կամ հոգաբարձուին:
8.8 Պայմանագրով/Վկայագրով Ապահովադրի (Ապահովագրված անձի, Շահառուի) իրավունքներն ու պարտականությունները չեն կարող փոխանցվել այլ անձի՝ առանց Ապահովագրողի գրավոր համաձայնության:
8.9. Պայմանագրով/Վկայագրով կարող են նախատեսված լինել նաև կողմերի այլ իրավունքներ և պարտականություններ:

ՀՈԴՎԱԾ 9. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ՆՇԱՆՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

9.1 Պատահարն ապահովագրական ճանաչելու և հատուցում կատարելու համար, Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն, ժառանգները) պետք է Ապահովագրողին ներկայացնի՝
ա) գրավոր հայտային դիմում, որտեղ նշված են տվյալ իրադարձության առաջացման հանգամանքները: Դիմումի ձևը Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն, ժառանգները) կարող է ստանալ Ապահովագրողի գրասենյակից,
բ) Ապահովագրողի պահանջով՝ Պայմանագրի/Վկայագրի բնօրինակը,
գ) անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի բնօրինակը:
9.2 Վերոհիշյալ փաստաթղթերից բացի Ապահովագրողին ներկայացվում են՝
9.2.1 Ապահովագրված անձին մարմնական վնասվածք պատճառվելու դեպքում՝
ա) համապատասխան իրավասու մարմինների կողմից տրված փաստաթղթերը, որոնք վկայում են Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում որոշակի դեպքի առաջացումը, որն ունի ապահովագրական պատահարի հատկանիշներ, նրա առաջացման հանգամանքների մասին, պարունակելով Ապահովագրված անձի լրիվ ախտորոշումը, բուժման ժամկետների, բուժիչ և ախտորոշիչ միջոցառումների մասին տեղեկություններ (սույն Պայմանների 3.1, 3.2 կետերով նախատեսված դեպքերում),
բ) արտադրությունում դժբախտ պատահարի մասին ակտ (անհրաժեշտության դեպքում, երբ պետք է սահմանվի պատահարի կապը Ապահովագրված անձի կողմից աշխատանքային պարտականությունների կատարման հետ), եթե այդ մասին նախապես հայտնվել է Ապահովագրողին,
գ) բուժ-սոցիալական փորձաքննության մարմնի տեղեկանքը հաշմանդամության խումբը (կարգը) սահմանելու մասին (սույն Պայմանների 3.2 կետերով նախատեսված դեպքերում):
դ) ժամանակավոր անաշխատունակության թերթիկը
9.2.2. Հատուցումը կատարվում է Շահառուին կամ Ապահովագրված անձի ժառանգին (ժառանգներին) 3.3 կետում թվարկված իրադարձությունների հետևանքով Ապահովագրված անձի մահվան դեպքում, կամ եթե Ապահովագրված անձը մահացել է, չստանալով առողջությանը հասցված վնասի (սույն Պայմանների 3.1. ենթակետը) կամ հաշմանդամության խումբը (կարգը) հաստատելու (սույն Պայմանների 3.2 ենթակետերը)

կապակցությամբ Ապահովագրված անձին հասանելիք ապահովագրական հատուցումը՝ այդ հատուցման մասով:
Ապահովագրված անձի մահվան դեպքում ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝
ա) սույն Պայմանների 9.1, 9.2 ենթակետում թվարկված փաստաթղթերը.
բ) ապահովագրված անձի մահվան վկայականի՝ օրենսդրությամբ սահմանված կարգով բնօրինակ կամ վավերացված պատճեն,
գ) բժշկական փաստաթուղթ (կամ օրենքով սահմանված կարգով վավերացված պատճեն), որտեղ նշված է Ապահովագրված անձի մահվան պատճառը (մահվան բուժվկայականից քաղվածք, դատաբժշկական եզրակացություն և այլն, եթե հայտարարված է ապահովագրության սույն Պայմանների 3.3 ենթակետերով նախատեսված դեպքը),
դ) ժառանգության նկատմամբ իրավունքի Վկայականի պատճեն՝ վավերացված օրենքով սահմանված կարգով (ներկայացվում է միայն ժառանգի կամ ժառանգների կողմից):
9.3 Այն դեպքում, երբ ներկայացված փաստաթղթերը չեն տալիս ապահովագրական հատուցման մասին որոշում ընդունելու հնարավորություն, Ապահովագրողն իրավունք ունի պահանջել լրացուցիչ փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են վերջնական որոշում ընդունելու համար, ինչպես նաև անցկացնել ներկայացված փաստաթղթերի փորձաքննություն, ինքնուրույն պարզել ապահովագրական պատահարի առաջացման պատճառները և հանգամանքները:
9.4 Ապահովագրական հատուցման կամ հատուցման մերժման մասին որոշումն ընդունվում է Ապահովագրողի կողմից՝ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ստանալու օրվանից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում՝ գրավոր հայտնելով այդ մասին դիմողին:
9.5 Ապահովագրական հատուցումը կարող է կատարվել՝
ա) Ապահովագրված անձին,
բ) Շահառուին,
գ) Ապահովագրված անձի ժառանգներին, հետևյալ դեպքերում՝
- եթե Ապահովագրված անձը մահացել է՝ չստանալով համաձայն 3.1, 3.2, 3.3 ենթակետերի նրան հասանելիք ապահովագրական հատուցումը,
- եթե Շահառուն դիտավորյալ զրկել է Ապահովագրված անձին կյանքից կամ դիտավորյալ պատճառել է նրան մարմնական վնասներ, որոնք առաջացրել են նրա մահը,
- եթե Շահառուն նշանակված չի եղել կամ մահացել է Ապահովագրված անձից առաջ,
- եթե նախքան ապահովագրական հատուցման մասին որոշումն ընդունելը տեղի է ունեցել Ապահովագրված անձի և Շահառուի մահը:
դ) Շահառուի ժառանգներին՝ եթե Ապահովագրված անձի մահվանից հետո տեղի է ունեցել Շահառուի մահը և նա չի հասցրել ստանալ նրան հասանելիք ապահովագրական հատուցումը:
9.6 Սույն Պայմանների 3.1 ենթակետով նախատեսված իրադարձությունների առաջացման դեպքում, ապահովագրական հատուցման չափը սահմանվում է համաձայն 9.7 կետի հետևյալ եղանակներից մեկի, որը նախատեսվում է կոնկրետ Պայմանագրում/Վկայագրում՝
ա) ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսներով: Պայմանագրով/Վկայագրով կարող է նախատեսվել Ապահովագրված անձի առողջությանը վնաս հասցնելու դիմաց ապահովագրական հատուցման առավելագույն թույլատրելի չափը:
բ) բուժման յուրաքանչյուր օրվա համար Պայմանագրում/Վկայագրում սահմանված ապահովագրական գումարի 0,4 տոկոսը, սակայն ոչ ավել, քան 5,000 (հինգ հազար) ՀՀ դրամ մինչև 5,000,000 ՀՀ դրամ ապահովագրական գումարի դեպքում և ոչ ավել, քան 10,000 (տաս հազար) ՀՀ դրամ 5,000,000 ՀՀ դրամը գերազանցող ապահովագրական գումարի դեպքում, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ: Բուժման առավելագույն ժամկետը 90 օր է, որի համար կատարվում է ապահովագրական հատուցում:
9.7 Ապահովագրված անձին ապահովագրական հատուցումը տրամադրվում է ապահովագրական գումարից հետևյալ չափերով՝

- հաշմանդամության I խումբ, «Հաշմանդամ երեխա» կարգավիճակ սահմանելու դեպքում – 100 տոկոս
- հաշմանդամության II խումբ սահմանելու դեպքում - 70 տոկոս
- հաշմանդամության III խումբ սահմանելու դեպքում - 40 տոկոս
- մահվան դեպքում – 100 տոկոս

- Աշխատունակության ժամանակավոր կորստի դեպքում – առավելագույնը 90 օր տևողությամբ բուժման յուրաքանչյուր օրվա համար Ապահովագրական գումարի 0.4 տոկոսի չափով, սակայն ոչ ավել, քան 5,000 (հինգ հազար) ՀՀ դրամ մինչև 5,000,000 ՀՀ դրամ ապահովագրական գումարի դեպքում և ոչ ավել, քան 10,000 (տաս հազար) ՀՀ դրամ 5,000,000 ՀՀ դրամը գերազանցող ապահովագրական գումարի դեպքում, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:

Կողմերի համաձայնությամբ Պայմանագրով/Վկայագրով կարող են սահմանվել այլ հատուցման տոկոսներ ըստ 3.1 կետով սահմանված Մարմնական վնասվածքների: 3.6 կետով նախատեսված ձևով Պայմանագրով/Վկայագրով այլ ապահովագրական պատահարներ սահմանվելու դեպքում՝ սահմանվում է Հատուցումների Աղյուսակ, որտեղ նշվում են ապահովագրական գումարից հատուցման տոկոսները յուրաքանչյուր պատահարի գծով: Հատուցումների Աղյուսակ սահմանելու դեպքում ապահովագրական հատուցումներ ըստ հաշմանդամության խմբերի չեն վճարվում, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:

9.8 Ապահովագրված անձի մշտական ընդհանուր անաշխատունակության դեպքում Ապահովագրողին է ներկայացվում հետևյալ փաստաթղթերը՝

ա) համապատասխան իրավասու մարմինների փաստաթղթերը, որոնք վկայում են Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում որոշակի դեպքի առաջացումը, որն ունի ապահովագրական պատահարի հատկանիշներ, նրա առաջացման հանգամանքների մասին, պարունակելով Ապահովագրված անձի լրիվ ախտորոշումը, բուժման ժամկետների, բուժիչ և ախտորոշիչ միջոցառումների մասին տեղեկություններ,

բ) հաշմանդամության խմբի վերաբերյալ բժշկա-սոցիալական փորձաքննության կամ հանձնաժողովի եզրակացությունը,

գ) արտադրությունում դժբախտ պատահարի մասին ակտ (անհրաժեշտության դեպքում, երբ պետք է սահմանվի պատահարի կապը Ապահովագրված անձի կողմից աշխատանքային պարտականությունների կատարման հետ), եթե այդ մասին նախապես հայտնվել է Ապահովագրողին,

դ) քաղվածք բժշկական քարտից (հիվանդության պատմությունից), որը ներառում է Ապահովագրված անձի մասին մինչև Պայմանագրի/Վկայագրի կնքումը մասնագիտական, ընդհանուր, խրոնիկ հիվանդությունների, չարորակ ուռուցքների, այդ թվում արյան հիվանդությունների վերաբերյալ տեղեկատվություն (եթե սահմանվում է բնական պատճառների հետևանքով աշխատունակության կորստի գրանցման դեպքեր):

9.9 Ապահովագրված անձի ժամանակավոր անաշխատունակության դեպքում Ապահովագրողին են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը՝

ա) անաշխատունակության թերթիկ բուժհիմնարկից, որտեղ անց է կացվել բուժումը, սահմանված ձևի ամբուլատոր կամ ստացիոնար բուժման վերաբերյալ տեղեկանք, որը պարունակում է տեղեկություններ Ապահովագրված անձի լրիվ ախտորոշման, բուժման ժամկետների, բուժիչ և ախտորոշիչ միջոցառումների մասին,

բ) արտադրությունում դժբախտ պատահարի մասին ակտ (անհրաժեշտության դեպքում, երբ պետք է սահմանվի պատահարի կապը Ապահովագրված անձի կողմից աշխատանքային պարտականությունների կատարման հետ), եթե այդ մասին նախապես հայտնվել է Ապահովագրողին,

գ) քաղվածք բժշկական քարտից (հիվանդության պատմությունից), որը ներառում է Ապահովագրված անձի մասին մինչև Պայմանագրի/Վկայագրի կնքումը մասնագիտական, ընդհանուր, խրոնիկ հիվանդությունների, չարորակ ուռուցքների, այդ թվում արյան հիվանդությունների վերաբերյալ տեղեկատվություն (եթե սահմանվում է բնական պատճառների հետևանքով աշխատունակության կորստի գրանցման դեպքեր):

9.10 Ապահովագրված անձին հաշմանդամության խումբ (կարգ) սահմանելու կապակցությամբ ապահովագրական հատուցումը կատարվում է՝

ա) մասհանելով նախկինում կատարված հատուցման գումարը, եթե այն տրամադրվել էր Ապահովագրված անձի առողջությանը վնաս պատճառելու կապակցությամբ (սույն Պայմանների 3.1 ենթակետը), որը հանդիսացել է հաշմանդամության պատճառ (պատճառներից մեկը), այն պայմանով, որ ապահովագրական հատուցումը նույնն է բոլոր ռիսկերի համար.

բ) անկախ այլ ռիսկերով նախատեսված ապահովագրական պատահարների կապակցությամբ նախկինում կատարված հատուցումների գումարից, եթե ապահովագրական գումարները սահմանված են եղել յուրաքանչյուր ռիսկի համար առանձին:

9.11 Այն դեպքում, երբ ապահովագրական գումարը սահմանված է եղել նույնը բոլոր ռիսկերի համար, սույն Պայմանների 3.1 ենթակետով նախատեսված իրադարձության կապակցությամբ և այդ իրադարձության

կապակցությամբ Ապահովագրված անձին հաշմանդամության խումբ (կարգ) սահմանելու համար ապահովագրական հատուցումների ընդհանուր չափը չի կարող գերազանցել համապատասխան խմբի (կարգի) հաշմանդամություն սահմանելու դեպքի համար նախատեսված ապահովագրական գումարը:

9.12 Եթե Ապահովագրված անձին հաշմանդամության խումբ (կարգ) սահմանելու կապակցությամբ վճարվել էր ապահովագրական գումարի մի մասը և Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում վերաքննությունից հետո հաշմանդամության խումբը փոխվել է մեկ այլ խմբի, որը սահմանելու դեպքում նախատեսված է ապահովագրական հատուցման ավելի մեծ չափ, լրացուցիչ հատուցումը կատարվում է նշված մեծ չափի և նախկինում կատարված հատուցման չափի մնացորդը կազմող գումարի չափով:

9.13 Ապահովագրված անձի մահվան կապակցությամբ ապահովագրական հատուցումը կատարվում է ապահովագրական գումարի 100 տոկոսի չափով՝ հանելով 3.1, 3.2, 3.4 ենթակետերով նախատեսված ապահովագրական պատահարների կապակցությամբ հատուցումները, եթե ապահովագրական գումարը սահմանված էր նույնը բոլոր ռիսկերի համար:

9.14 Պայմանագրով/Վկայագրով ապահովագրական հատուցումների ընդհանուր չափը չի կարող գերազանցել Ապահովագրված անձի համար սահմանված միասնական ապահովագրական գումարի չափը:

9.15 Եթե ապահովագրական գումարները սահմանված են եղել Պայմանագրում/Վկայագրում ներառված յուրաքանչյուր ռիսկի համար առանձին, իսկ Ապահովագրված անձի մահը տեղի է ունեցել նախքան սույն Պայմանների 3.1 ենթակետով նախատեսված իրադարձության պահից 72 ժամ լրանալը, ապահովագրական հատուցումը կատարվում է միայն մահվան ռիսկի համար նախատեսված չափով:

9.16 Եթե Պայմանագիրը/Վկայագիրը կնքելիս ապահովագրական գումարները սահմանված են Ապահովագրված անձին Պայմանագրում/Վկայագրում ներառված յուրաքանչյուր ռիսկի համար առանձին, կոնկրետ ռիսկով նախատեսված ապահովագրական պատահարների կապակցությամբ, ապահովագրական հատուցումները անկախ նրանց քանակից, չեն կարող գերազանցել այդ ռիսկի համար սահմանված ապահովագրական գումարի 100 տոկոսը:

9.17 Եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ, ապահովագրական հատուցումը կատարվում է Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցման մասին որոշումն ընդունելու պահից 15 աշխատանքային օրվա ընթացքում՝ փոխանցման միջոցով կամ կանխիկ:

Վճարման օր է համարվում բանկում Ապահովագրողի հաշվից միջոցների դուրսգրման կամ Ապահովագրողի դրամարկղից կանխիկ դրամի տրամադրման օրը:

9.18 Ապահովագրական հատուցումն իրականացվում է Պայմանագրով/Վկայագրով այն ստանալու իրավունք ունեցող անձին՝ անկախ ապահովագրության այլ պայմանագրերով, ինչպես նաև պարտադիր սոցիալական ապահովագրությամբ, սոցիալական ապահովմամբ և վնասի հատուցման կարգով նրան հասանելիք գումարներից:

10. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

10.1 Ապահովագրողն ազատվում է հատուցում կատարելու պարտավորությունից այն դեպքում, եթե ապահովագրության սույն Պայմանների Հոդված 3-ում թվարկված իրադարձություններն առաջացել են հետևյալի արդյունքում՝

10.1.1 14 տարեկան և բարձր տարիք ունեցող Ապահովագրված անձի կողմից դիտավորյալ հանցանք գործելու կամ հանցագործության մեջ մասնակցելու,

10.1.2 միջուկային պայթյունի, ճառագայթման կամ ռադիոակտիվ վարակի,

10.1.3 Ապահովագրված անձի կողմից առանց տվյալ կարգի վարորդական իրավունքի փոխադրամիջոց վարելու կամ Ապահովագրված անձի կողմից փոխադրամիջոցի վարումը տվյալ կարգի փոխադրամիջոցի վարորդական իրավունք չունեցող անձին փոխանցելու,

10.1.4 Ապահովագրված անձի կողմից ալկոհոլային կամ այլ հարբեցման վիճակում փոխադրամիջոց վարելու, ինչպես նաև ալկոհոլային, թմրադեղային կամ թունավոր հարբեցման վիճակում գտնվող անձին փոխադրամիջոցի վարումը փոխանցելու,

10.1.5 14 տարեկան և բարձր տարիք ունեցող Ապահովագրված անձի ինքնասպանության (ինքնասպանության փորձի) արդյունքում, եթե Պայմանագիրը/Վկայագիրը գործում էր երկու տարուց պակաս, բացառությամբ այն դեպքերի, երբ նա հասցվել էր նման վիճակի երրորդ անձանց անօրինական գործողությունների արդյունքում,

10.1.6 14 տարեկան և բարձր տարիք ունեցող Ապահովագրված անձի կողմից իրեն դիտավորյալ մարմնական վնասներ հասցնելու,
10.1.7 ազատազրկման վայրում Ապահովագրված անձի հետ պատահած դժբախտ պատահարի,
10.1.8 14 տարեկան և բարձր տարիք ունեցող Ապահովագրված անձի ալկոհոլով (ալկոհոլ պարունակող նյութերով), ինչպես նաև թմրանյութերով թունավորման, եթե իրավասու մարմինների կողմից չի սահմանվել նրանց բռնի ներարկումը, սխալմամբ օգտագործումը,
10.1.9 ապահովագրված անձի կողմից սպորտի վտանգավոր տեսակներով (ավտո- և մոտոսպորտ, անկարգելով թռիչքներ, կոնտակտային մենամարտեր, ալպինիզմ, լեռնային և ջրային շրջազբոսություն, ստորջրյա նավարկություն և այլն) զբաղվելու կամ գիտակցաբար իրեն բացառիկ վտանգի ենթարկման (բացի մարդկային կյանքը փրկելու փորձից),
10.1.10 ռազմական գործողությունների, ինչպես նաև զորաշարժերի և ռազմական այլ միջոցառումների,
10.1.11 քաղաքացիական պատերազմի, ցանկացած տեսակի ժողովրդական հուզումների կամ գործադուլների,
10.1.12 ահաբեկչական ակտերի,
10.1.13 Պայմանագրով/Վկայագրով նախատեսված այլ հանգամանքների արդյունքում:
10.2 Ապահովադրի և Ապահովագրողի համաձայնությամբ Պայմանագրում/Վկայագրում կարող է նախատեսված լինել Ապահովագրողի պատասխանատվությունը ապահովագրության սույն Պայմանների 10.1.2, 10.1.9-10.1.12 ենթակետերում թվարկված իրադարձություններով:
10.3 Ապահովագրողն կարող է ազատվել հատուցում կատարելու պարտավորությունից, եթե՝
10.3.1 Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) պատահարի մասին չի հայտնել Ապահովագրողին 24 ժամվա ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ Ապահովադիրը եղել է անգիտակից վիճակում կամ այնպիսի իրավիճակում, որն անհնարին է դարձնում Ապահովագրողին պատահարի մասին տեղեկացնելը, ապա նա պարտավոր է դա անել անհնարին դարձնող հանգամանքների վերացումից անմիջապես հետո: Ապահովադիրը կրում է ապահովագրական հատուցում ստանալու համար սահմանված ժամկետում դիմելու անհնարինության ապացուցման պարտականությունը,
10.3.2 Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) տեղի ունեցած պատահարի մասին չի հայտնել համապատասխան իրավասու մարմիններին (Բժշկական հաստատություն, Ոստիկանություն և այլն),
10.3.3 Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) ներկայացրել է կեղծ տեղեկություններ կամ կեղծ փաստաթղթեր և օգտագործել է ցանկացած կեղծ միջոցներ:
10.3.4 Ապահովադիրը, Ապահովագրված անձը կամ Շահառուն խախտել է Պայմաններում կամ Պայմանագրում/Վկայագրում ներկայացված որևէ դրույթ կամ պարտավորություն կամ Ապահովագրված անձի նկատմամբ Ապահովագրություն չի իրականացվում համաձայն Պայմանների:

ՀՈԴՎԱԾ 11. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

11.1 Պայմանագրով/Վկայագրով պարտավորությունների կատարման ընթացքում առաջացող վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:
11.2 Վիճելի հարցերով համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ նրանց որոշումը փոխանցվում է դատական մարմիններին՝ ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված կարգով:

ՀՈԴՎԱԾ 12. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)

12.1 Կողմերից ոչ մեկը պատասխանատվություն չի կրում սույն Պայմանագրից/Վկայագրից բխող պարտականություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար, եթե դա հանդիսացել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանք, մասնավորապես՝ ջրհեղեղի, հրդեհի, երկրաշարժի և այլ տարերային աղետների, ռազմական գործողությունների, քաղաքացիական պատերազմի, ցանկացած տիպի ժողովրդական հուզումների, գործադուլների, տնտեսական շրջափակման, ինչպես նաև այլ կառավարության կողմից սահմանված սահմանափակումների և արգելքների:
12.2 Այն դեպքում, երբ 12.1 կետում նշված հանգամանքներից մեկն անմիջականորեն ազդել է պարտականությունը Պայմանագրով/Վկայագրով սահմանված ժամկետում կատարելու վրա, դրա կատարումը հետաձգվում է այդ հանգամանքների ազդեցության ժամկետով: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 30 (երեսուն) օրից ավելի, կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի

ամբողջությամբ կամ մասնակիորեն լուծել Պայմանագիրը/Վկայագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին, և այդ դեպքում կողմերից ոչ մեկը պատասխանատվություն չի կրում հնարավոր վնասների փոխհատուցման համար:

12.3 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը Պայմանագրից/Վկայագրից բխող պարտականությունների կատարման վրա պարտավոր է ապացուցել այն կողմը, որի պարտականությունների կատարմանը խոչընդոտում է նման ազդեցությունը:

ՀՈԴՎԱԾ 13. Պայմաններում օգտագործվող հիմնական հասկացություններ

Ապահովագրող՝ «Ռոսգոսստրախ-Արմենիա» Ապահովագրական ՓԲԸ:

Ապահովադիր՝ գործունակ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որն Ապահովագրողի հետ կնքել է ապահովագրության Պայմանագիր/Վկայագիր:

Շահառու՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որն ապահովագրության Պայմանագրում/Վկայագրում նշված է որպես ապահովագրական հատուցում ստացող՝ Ապահովագրված անձի գրավոր համաձայնությամբ:

Ապահովագրված անձ՝ ֆիզիկական անձ, որի տարիքը Պայմանագրի/Վկայագրի կնքման պահի դրությամբ կազմում է 1-ից 65 տարեկան ներառյալ (եթե Պայմանագրում/Վկայագրում այլ բան նշված չէ), Պայմանագրում/Վկայագրում նշված է որպես ապահովագրված անձ և որի օգտին կնքված է Պայմանագիրը/Վկայագիրը, եթե Պայմանագրում/Վկայագրում որպես Շահառու նշված չէ այլ անձ:

Ապահովագրության պայմանագիր՝ (այսուհետ՝ Պայմանագիր/Վկայագիր)՝սույն Պայմանների համաձայն Ապահովադրի և Ապահովագրողի միջև կնքված Պայմանագիր/Վկայագիր:

Ապահովագրական գումար՝ Պայմանագրում/Վկայագրում սահմանված դրամական գումար, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է կատարել ապահովագրական հատուցում՝ ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում: Ապահովագրական գումարի չափը որոշվում է կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

Ապահովագրական սակագին՝ ապահովագրավճարի դրույքաչափն է ապահովագրական գումարի նկատմամբ, որն սահմանվում է Ապահովագրողի կողմից՝ հաշվի առնելով ապահովագրական ռիսկի բնույթը:

Ապահովագրավճար՝ ապահովագրության դիմաց վճար, որն Ապահովադիրը պարտավոր է վճարել Ապահովագրողին՝ համաձայն Պայմանագրի/Վկայագրի: Ապահովագրավճարի չափը, վճարման կարգը և ժամկետները սահմանվում են Պայմանագրով/Վկայագրով՝ կողմերի փոխհամաձայնությամբ:

Հերթական ապահովագրական վճարում՝ Ապահովադրի կողմից վճարվող ապահովագրավճարի մաս: Հերթական վճարումները սահմանվում են Պայմանագրով/Վկայագրով:

Չհատուցվող գումար՝ վնասի մաս, որը ենթակա չէ հատուցման Ապահովագրողի կողմից: Այն սահմանվում է Պայմանագրով/Վկայագրով՝ կողմերի փոխհամաձայնությամբ: Չհատուցվող գումարը կարող է լինել պայմանական կամ ոչ պայմանական և սահմանվել ապահովագրական գումարի նկատմամբ ինչպես տոկոսներով, այնպես էլ բացարձակ արժեքով:

Պայմանական չհատուցվող գումար՝ Ապահովագրողն ազատվում է չհատուցվող գումարը չգերազանցող կամ հավասար վնասի համար պատասխանատվությունից, սակայն, եթե վնասի չափը գերազանցում է սահմանված չհատուցվող գումարը, ապա ապահովագրական հատուցման չափը սահմանելու ժամանակ չհատուցվող գումարը հաշվի չի առնվում:

Ոչ պայմանական չհատուցվող գումարը՝ չհատուցվող գումարի չափով ապահովագրական հատուցման նվազեցում յուրաքանչյուր ապահովագրական պատահարի դեպքում:

Ապահովագրական ռիսկ՝ ենթադրելի իրադարձություն, որի առաջացման դեպքի համար կնքվում է Պայմանագիրը/Վկայագիրը:

Մարմնական վնասվածք՝ կենդանի հյուսվածքների կառուցվածքի և օրգանների անատոմիական ամբողջականության խախտում, ինչը հանդիսացել է արտաքին միջավայրի ֆիզիկական (բացառությամբ էլեկտրամագնիսային և իոնացնող ճառագայթման) և քիմիական գործոնների միապահ կամ կարճաժամկետ ազդեցության արդյունք, որի ախտորոշումը կազմվել է բժշկական գիտությանը հայտնի ախտանիշների հիման վրա:

Դժբախտ պատահար՝ անսպասելի, հանկարծակի իրադարձություններ, որոնք տարբերակվում են ըստ իրենց առաջացման բնույթի, վայրի և ժամանակի և որոնք բերել են Ապահովագրված անձի մարմնական վնասվածքին, հանկարծակի սուր թունավորմանը, աշխատունակության ժամանակավոր և/կամ մշտական կորստին և/կամ մահվանը:

Մշտական ընդհանուր անաշխատունակություն՝ Ապահովագրված անձի առողջության այնպիսի վիճակ, որի դեպքում, բժշկական տեղեկանքների համաձայն, ապահովագրված անձը կարիք ունի մշտական խնամքի (օգնության կամ հսկողության) կամ կարող է իրականացնել աշխատանքային գործունեության միայն առանձին տեսակներ՝ հատուկ կազմակերպված անհատական պայմաններում (հատուկ արտադրամասեր, տնային աշխատանք, աշխատանքային որոշակի հարմարանքների օգտագործում), որոնք պայմանավորված են բժշկա-սոցիալական փորձաքննության մարմինների որոշմամբ՝ հաշմանդամության 1-ին, 2-րդ և 3-րդ խմբի, «Հաշմանդամ երեխա» կարգավիճակի սահմանմամբ:

Աշխատունակության ժամանակավոր կորուստ՝ Ապահովագրված անձի այնպիսի առողջական վիճակ, երբ նա ժամանակավորապես կորցնում է որևէ աշխատանքի նկատմամբ ունակությունները, որոնք վերականգնելի բնույթ ունեն և միաժամանակ ստանում է ամբուլատոր կամ ստացիոնար բուժում համապատասխան բժշկական հաստատությունում և որը առաջացել է դժբախտ պատահարի հետևանքով: Ժամանակավոր անաշխատունակության փաստը պետք է հավաստվի նման իրավասություն ունեցող բժշկական հաստատության կողմից տրված պաշտոնական փաստաթղթի միջոցով:

Միսալ բժշկական մանիպուլյացիաներ՝ բուժաշխատողների կողմից թույլ տրված եւ իրավասու մարմինների կողմից հաստատված շեղումներ բժշկագիտությամբ սահմանված մանիպուլյացիաների իրականացման տեխնիկայից, որոնք առաջացրել են ապահովագրված անձի առողջության համար բացասական հետևանքներ. գլխուղեղի, ողնուղեղի, ներքին օրգանների վնասում, ոսկրերի կոտրվածք, հոդախախտ, վերք, կտրվածք, այրվածք, ցրտահարություն, էլեկտրահարություն, սեղմում, օրգանի լրիվ կամ մասնակի կորուստ:

Հանկարծակի սուր թունավորումներ՝ Ապահովագրված անձի օրգանիզմի կտրուկ զարգացող հիվանդագին փոփոխությունները և պաշտպանիչ ազդանշանները, որոնք առաջացել են արտաքին միջավայրից օրգանիզմի մեջ հանկարծակի ստացված թունավոր հատկություններ ունեցող քիմիական նյութի միապահ կամ կարճաժամկետ ազդեցության հետևանքով:

Ապահովագրական պատահար՝ Պայմանագրով/Վկայագրով նախատեսված, տեղի ունեցած իրադարձություն, որի տեղի ունենալու դեպքում Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում, առաջանում է Ապահովագրողի պարտականությունը տրամադրել ապահովագրական հատուցում Ապահովադրի կամ Շահառուին

Ապահովագրական հատուցում դրամական գումար՝ Պայմանագրով/Վկայագրով սահմանված ապահովագրական գումարի սահմաններում, որն Ապահովագրողը, համաձայն Պայմանագրի/Վկայագրի, պետք է վճարի Ապահովադրին կամ Շահառուին ապահովագրական պատահարի առաջացման դեպքում:

Աշխարհագրական սահմանափակումներ՝ սույն ապահովագրությունը սահմանափակված է Հայաստանի Հանրապետության տարածքով, եթե այլ բան նշված չէ Պայմանագրում/Վկայագրում:

14. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

14.1 Սույն Պայմանները հաստատվում են Ընկերության Խորհրդի կողմից:

14.2 Սույն Պայմաններն ուժի մեջ են մտնում 2012 թվականի հուլիսի 10-ից: